

ՊԱՏԿԱՍՏԱՅՆԻ ԶՐՎԷԺԸ

Խորտակելով ժայռերուն ամբարտակները բոլոր
Դուրս կը նետուիս նախամարտ զորագունդի մը նըման,
Կ'երգես անվերջ փրփրահեղձ դահավիթման շունչով լայն,
Խորտակելով ժայռերուն ամբարտակները բոլոր:

Կը լսուի երգըդ խրրոխտ աղատութեան փողին պէս,
Երբ դըրօշները կ'անցնին փողոցներէն ողբաշունչ,
Լեռնաբլուզի ամէն տան սեմին առջեւ հունչ առ հունչ
Կը լսուի երգըդ խրրոխտ աղատութեան փողին պէս:

Լերկ ափունքներդ չունին դեղապաճոյճ ո'չ մէկ կայք,
Ապերասան ես հանդոյն բընութեան խեղ տարբերուն,
Ետիդ ձրկած զոմերուն փշրած ես ոյժն ու աւին,
Լերկ ափունքներդ չունին դեղապաճոյճ ո'չ մէկ կայք:

Պիտ' ըզձայի քեզ նըման ըլլալ ազատ եւ հրօր,
Երբ հողմին մէջ կը ձայնես աւելի բարձր ու վէս,
Երբ զերդ նըժույզ դեղաբաշ կ'անցնիս դուն իմ առջեւէս,
Պիտ' ըզձայի քեզ նըման ըլլալ ազատ եւ հրօր:

Ըլլալ քեզ պէս խուֆէ խուֆ արիւնլըւայ, բայց անսանձ,
Ներշնչման մէջ սիրտն իմ միշտ յորձանքներդ պէս փրփրուն,
Նետուի՛ր յառաջ, ու երգել բարձրադալակ օրն ի բուն,
Ըլլալ քեզ պէս խուֆէ խուֆ արիւնլըւայ, բայց անսանձ:

Հանդոյն քեզի վայելել բընութեան դեղն համօրէն,
Այս վիթխարի ժայռերուն ամայութիւնը մըռայլ,
Արեւուն մէջ, լուսնին տակ ես իմ երգով արբենալ,
Հանդոյն քեզի վայելել բընութեան դեղն համօրէն:

Երգէ անվերջ, երգըդ թող լեցնէ անտառ եւ հովիտ,
Լեռներէ լեռ թող ողբի շրջի ազատ եւ արի,
Ամէն սրտի մէջ ձայնիդ թող արձագանգը լսուի,
Երգէ անվերջ, երգըդ թող լեցնէ անտառ եւ հովիտ:

«ԱԶՈՂՈՅԷՆ ՎԵՆԵՏԻԿ» – Հրատարակուած
Վենետիկ – Ս. Ղազար, 1953 էջ 166–167:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

ԶՐՎԷԺ

Ժայռերի ձիւնը կլանելով
Զօրագունդի պէս դուրս ես նետում,
Բռնում ես փրփրահեղձ
Գահավիթման շնչով լայն,
Աղատութեան փողի պէս
Լըւում է երգըդ մեծ...

Ուզում եմ քեզ նման
Լինել ազատ եւ հօր,
Յորձանքներիդ պէս փրփրուն,
Արնալայ, բայց անսանձ
Նետել առաջ,
Երգել բարձրադալակ
Քո փրփրադէպ
Յորձանքներիդ տակ...

Ուզում եմ սիրել քեզ պէս
Շփելուքիւնը բնութեան,
Մութ ժայռերի ամայութիւնը
Սէպ ու վէս,
Արեւի, լուսնի եւ ձիւնի տակ
Շաչիւնովդ արբենալ,
Զրկէ՛ժ, ժրկէ՛ժ, ջրկէ՛ժ,
Համանապ բնութեան...

1959

ԱՐԱ

«ՆՈՐ ԷՋ» – Գիրք Գրականութեան
Թիւ 11, էջ 29. Թեհրան 1959



ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ

Այս սիւնակի վերի մասին մէջ տպուած
ոտանաւորը առնուած է «ՆՈՐ ԷՋ» զրա-
կան պարբերապրէն, որու Ա. մասին մէջ
հինգ քերթուած տուած է Իրանահայ բա-
նաստեղծ ԱՐԱ. (էջ 26–30). չորրորդը այս
«Զրկէ՛ժ»ն է:

Ինչպէս նկատեցինք, այս քերթուածը
մէկ ամփոփ յարասութիւնն է, աւելի
ճիշտ՝ համառոտուած օրինակութիւնն է
բանաստեղծ Արամայիս Սրապեանի մէկ
ընդարձակագոյն քերթուածին, որ լոյս
տեսած է չուրջ վեց տարի առաջ (տե՛ս
Հանդիպակաց էջը):

ԱՐԱ ստորագրուած քերթուածիկը ունի
ընդամէնը 68 բառ, որոնցմէ 47 հատը փոխ

առնուած է բանաստեղծ Արամայիս Սրա-
պեանի քերթուածէն, քանի մը հատն ալ
չնչին փոփոխութեամբ դիմակաւորուած:
Բայց խնդիրը բառերու փոխառութեամբ
չի լմնար. այլ կայ նախադասութիւննե-
րու, պատկերներու, նմանութիւններու եւ
ըզձայններու փոխառութիւն, գրեթէ մի-
եւնոյն բառերով. այս այլեւս փոխառու-
թիւն չէ, այլ զրազոյութիւն:

Առաջին երկու տունները կատարեալ նոյ-
նութեամբ կարելի է տեսնել Ա. Սրապեա-
նի քերթուածին մէջ:

Երկրորդ տունը ամբողջութեամբ քաղ-
ուած է Ա. Սրապեանի քերթուածին չոր-
րորդ եւ հինգերորդ տուններէն:

Երրորդ կամ վերջին տունը քաղուած է
Ա. Սրապեանի վեցերորդէն: Վերի հրա-
տարակութեան մէջ՝ ընդգծած ենք բոլոր
փոխառեալ մասերը:

Ի՞նչ կը մնայ բուն ԱՐԱ-էն:

Եւ եղաւ ոտանաւոր. քերթուած:

Եւ այս կը կոչուի բանաստեղծութիւն.
ուրիշ բառերով՝ զրական ստեղծագործու-
թիւն:

Իսկ ստորագրութիւնը՝ ԱՐԱ. արդեօք
Արամայիս Սրապեանի համառօտ ձե՞ռն է:

Աս ալ կրնայ զիւտ մը ըլլալ. թերեւս
քերթուածէն աւելի յաջող:

Այս պարագային՝ քննութեան ենթար-
կելու ենք միւս քերթուածիկներն ալ:

Ամէն պարագայի, կը հաղորդենք մեր
ընթերցողներուն, որ ամէնէն առաջ ինք
բանաստեղծ Արամայիս Սրապեանն է որ
բողոքի ձայն բարձրացուցած է մինչև Թե-
հրան, պարբերապրէի հրատարակիչնե-
րուն, եւ մինչև Վենետիկ, մեր խմբա-
գրութեան, խնդրելով որ տեղ տանք այս
ցաւալի հաղորդագրութեան:

Մեզի համար շատ տհաճելի բան է զրա-
դիլ նման ոստիկանական հարցերով:

Բայց աւելի անհաճոյ երեւոյթը՝ զրա-
զոյութիւնն է:

Կը յանձնարարենք զուշուրթիւն. ճար-
պիկ ու վարպետ ոստիկաններ ունինք, որ
զիտեն քօղաղերձել ամէն դեղին կեղծիք:

ԽՄԲ.